չինեալ և Բ տղայ անդ եդեալ, զի ածիլէր մինն ըզ-
գլուխ[1]) միւս մանկան՝ իւրեանց կրպակի սարօքն,
սփածանելօք և մանտիլօք և հայելովք։

ժա. Եւ ապա բանակն տնտեսից որ զամենայն ինչս
եփեն ուտելոյ, որ ասի աշճի, և պետք սոցա. նոյն-
պէս և զգեստ մանկանցն եւս եւ խանութ չինեալ ի
վերայ ըզտոյ, զի այր մի վառեալ կրակ և եփէր զկե-
բակուրն եւ բաժանէր ամսան առ ամսան, եւ ընդ սոցա
եւս փողք եւ թմբուկք[2]), որպէս առաջնոցն, եւ ընդ
սոցա պոյանճին եւ թթուածախքն։

ժբ. Եւ բանակն փոքր որ ասեն արփաճի, նոյն
զունակ հանդերձիւ[3]), և ցանէր զգարին երթալով ի
ճանապարհին, այն որ յերիվարս էր հեծեալ։

ժգ. Եւ բանակն չուխայից եւ զուսաշիցն փոքր,
զոր էին Հրէայք հանդերձ Բ պետօք որ էին ձիա-
ւորք, եւ Բ Ցանկօք։

ժդ. Եւ ապա եկն բանակ մուճակածախիցն որ
ասի զաւաթ, եւ պետք սոցին ձիաւորեալ նոյնպէս,
եւ ամենեքեան զինուք բազում զօրօք, եւ եւս սոքա
թմբկօք[4]) եւ փողով մեծաւ եկեալ անցին, եւ ման-
կունք կարէին ի վերայ ձիոցն անարկել. ընդ սոսա
էին[5]) կարողքն մուճակից, զոր սոքա ուրոյն են ի
զաւաթիցն, եւ էսկիճին եւս ընդ սոսա էր։

ժե. Եւ ապա բանակն դարբնաց նոյնպէս զինուք
եւ պետք նոցին եւս յետ եւ յառաջ, զոր խառնէին
ընդ Հայս հեծեալք եւ ընդ սոսա էր մախասճին եւ
նալչաճին։

ժզ. Եւ ապա զազէզն, նոյնպէս և սոքա և պետք
եւս նոյնպէս, եւ մանկունք նստեալ ի վերայ ջորոցն
գործէին զգործն, եւ սոքա եւս ունէին ընդ իւրեանս

1) գլուխս 2) թմկուկս. 3) հանդերձիւ. 4) թմկօր. 5) էր.